

և զայն լուծելով հաճոյք կը դժամք ,
առանց յիշելու որ պատուիրանազան
ցութիւն է ըրածնիւ , և երբ Եկեղեւ
ցւոյ մէկ պատուէրը առանց խղճելու
կը լուծենք , այնուհետեւ արգելք ըք
մասր մեղ ուրիշ պատուէրներն ալ
լուծելու , հաւատարմութեան դէմ
մէկ յանցանքն ալ հերիք է անհաւա-
տարիմ ընելու զմեղ , մանաւանդ ըս-
պատուած օդուան ալ չենք ստանար ,
անժութկալութեամբ կամ զեղծւմով ,
ինչպէս է այժմեան պահքը : Վասն
զի ուր դնենք այն ախտարծարծ նիւ-
թերը որովք այժմեան պահոց կե-
րակուրները կը պատրաստուին , որ ոչ
մարմնոց եւ ոչ հոգւոյ օդուակար են .
այլ պահքը օդուակար լինելու համար
պէտք է հրաժարիլ այն ամեն կերա-
կուրներէն ու ըմպելիքներէն որք սառ-
տիկ կը զօրացնեն , չափազանց կը մնու-
ցանեն եւ արտգ արտգ կ'աճեցնեն ,
և ըստ նմին համեմատութեան կեան-
քը կը կարձացնեն . ինչպէս են միար ,
Ճարպերը , համեմները , գինին , օղին
և ուրիշ պարարտ ուտելիքներ և ո-
գելից ըմպելիք :

(Յարանաթէլ :)

Սասկաֆ⁽¹⁾ մէջ հրատարակուած հե-
տեւեալ յօդուածը Աղջային ներկայ
վիճակին նկատմամբ ուշադրութեան
արժանի համարելով պատշաճ համա-
րեցինք Սիօնի մէջ կրկին հրատարակել :

ՆԵՐԿԱՑԻՄ ՎՐԱՅ ԽՈՐՀՈՂԱԾՈՒԹԻՒՆՔ

Ա .

Ժամանակ մը եղաւ , գեռ երէկ ,
որ հայ ազդին մէջ գտնուեցան մար-
դիկ , որք սերտ և զօրաւոր կեդրոն մը

երեւակայելով , զանիք քայրայիլ կարե-
ւոր դասեցան , և ամենայն քաջութիւ-
նիոն ՚ի գործ արկին , մեծ յարտե-
ւութեամբ աշխատեցան և այն կար-
ծեցեալ զօրաւոր կեդրոնին համենալու
համար մուրճ ՚ի ձեռին ինչ որ գոտան
զարկին կոարեցին ջախջախուցին , և հի-
ման բան մը տեղը դնել թէ որ պէտք
կայ , ինչ պիտի դնեն՝ ան չենք տեսներու
Մենք այնպէս կարծենք թէ նու որ կը
կործանէ , շգիտակը շնել . երանի թէ
սուտ ըլլոյ մեր կարծիքը . երանի թէ
այդ կեդրոնը թէ որ Պատրիարքարա-
նըն էր , ահա չեկայ , Էջմիածին էր՝
շերեւար , Այս և Աղմամար յայտնի է
թէ ինչ են և ինչպէս կերեւան , — այդ
կեդրոնը՝ այոնիքն այս ահագին ցրուա-
ծութեան՝ անկարողութէ ճարլ՝ մեզի
կարենային գտնել անոնք և կարենային
կառավարութեան հեարք մը գտնել ,
և այս ջախջախ նաւուն փոտած զեկը
յանձնել այնպիսի ձեռքերսւ , որ գոնէ
վատահութիւն գտնել յաջողէին Աղջին
ընդհանրութենէն , և որ մեծն է՝ օդ-
տակար ըլլոյ : Եւ այս հրաշքը կարե-
լի է այնպիսի անձնիքներէ , որք ստու-
թիւնն ու զրապարաւութիւնը զէնք ա-
ռած , անոնց օրինակին հետեւեցան
մինչեւ ցայսօր , որոնց համար Աղջին
մեծ պատմարանը⁽¹⁾ կը գանդատէր ու
կըսէր . « Զի ոչ զեզուս զայս և զոլո-
գիտութիւնս հանդերձ մետափ փառա-
մազութեամբն և կատագի լեզուաբա-
նութեամբն՝ սանձահարեցէք . այլ
նիւթ նոցա անմատութեան զներ ու-
սումնատեացդ տալով զբարս , բորբո-
քեցէք առաւել քան զհնոցն Բարելու-
նի ո : Ես այս տողերը կարգալով մար-
դարէութիւն մը կը նշմարեմ ժամա-
նակիս համար : Լեզու չար , իսպալ լւա-
ռաբանութիւն , տոկոց առելի ինչ կընաց

(1) Տե՛ս Բժ. 1529 .

ըստ, կործանման սգին զէլք ըստ
իւ որ կայ կը թունաւորէ . այսօր կը
բարձրացնէ՝ վազք գետնէ գետին ջար-
նելու համար . ովլ, ինչ աղստ մնաց
առ անոփի դաշտամը թեան ձեռքէն . համ-
բաւ, պատիւ, առաբժնութիւն, ան-
շոհափրութիւն, համբերութիւն,
աղդօդուտաշխատութիւնք, ուսմունք,
գիտութիւն, կրօք, օրէնք, ամենայն
առաթուք սոգի տակ կերթան ոչ հրա-
կաներու՝ այլ ողորմէլի դաշտամներու,
որբ խաղաղիկ ՚ի ձեռս առած ժողովն-
գեան մը տգիտութիւնը կը հարուա-
ծեն Պատրիարք, Տեղապահ, Եպիս-
կոպոս, տիտղոս, պատիւ, վարժապետ,
դաստիարակ, քահանաց և խմբագիր .
միայն և բաւականէ թէ ասոնք քիչ մը
բարձր ըլլան սրտով և մարտվարհա-
մարհելու համար այդ խառնազան-
մի արժանի լեզուն և գրութիւնք. բայց
այդ արհամարհովներուն պատիմը պի-
տի ըլլայ այս, որ երբ Ազգը կ'ընկնի
և կ'ազտատի, իրենք ու հետը կ'իջնան,
իրենց վրայ առ այդ աղուեզութենէն
քիչ մը բան կը ցատկի : Ընտանի թըշ-
նամին տունը կը փցնէ, բայց վիասը
բոլոր գերդաստանին է . քննանալ ան-
քաւելի յանցանքէ . Եւ այդ հայ պատ-
մութեան հայրը, տէսէք, չուզզեր իր
խօսքը անսնց՝ որ չար և կսասացի լեզ-
ուավ և մնատի փառամոլութեամբ և
տգիտութեամբ ապականութիւն էին
Ազգին մէջ . չէ, անսնց հետ խօսիլ ար-
ժան չի համարիք, վասն զի չեն ուղ-
ղուիք . այլ զանննք կը կշամբէ, որ
կինային եւ չուզզեցին սանձահարել
“Զիզուս չարս եւ զոդիատութիւնաց
իրենց անհօգութեամբն ու անտարբե-
րութեամբ :

Բայց այսօր ընտանի թշնամւցն քով
կայ օտարացեալ թշնամին՝ որ Ազգին
կործանմանցն ու բաժանմանց վրայ
կ'ուրախանաց, կը ծափահարէ, նորա

կընաւկան իշխանութիւններն ինչ որ
կան՝ մատերուն վրայ կը համբէ, նորա
խեղճ ազգութիւնը կը ծաղրէ, անցեա-
լըն ու ներկայն կը նուաստացնէ, ագի-
տութիւնն ու աղբատութիւնը կ'ար-
համարհէ :

Եւ այս վիճակը տեսնելով, ինչ
կ'զգայ օտարը՝ որ անտարբերէ, և օ-
տարը՝ որ այս վիճակէն օգուտ կը յու-
սայ, թող խօրհրդածէ ով որ իր հարց
հարազատ արիւն ունի երակներուն
մէջ, իսկ խորթացեցն և անհարազա-
տին՝ որ իր ազգը միլիոններու կը հանէ
առանց համբանք գիտնալու, որ ան-
ցեալը կ'երազէ առանց ներկայն տես-
նելու, որ օտարին ուկին՝ ձեռքին մէջ
կշռելով չի գանգաղիք աժան զնով իր
ազգին թցն ծախելու, որ վաստակ կը
համարի երկու հազար հմտի հարիւր
զրու չը Պատրիարքի անհետութեամբ՝
և կուրախանաց, իմացնել սրատք կը
համարինք թէ կայ օտար մը՝ որ Հայաս-
տանի առաջնորդական աթօռներուն
քով հաստատած եպիսկոպոսական ա-
թօռներունի, և տարինքասնական հա-
զար ֆրանք կը համբէ, թէ կայ օտար մը՝
որ իր կրօնական շահերը պաշտպանե-
լու համար, շոհեր՝ որ Հայ Եկեղեցւց
և ազգութեան միջու ընդգիմակաց ե-
ղած են, դեռ երեկ հազարներով ու-
կի վճարեց . Թէ կայ օտար մը որ Հոյ
ժողովուրդն իր Եկեղեցւցն գրկէն՝ օ-
տարացնելու համար՝ ազգաց իրաւուն-
քըն և ամենայն արդարութիւն սոնա-
կով ըրեր է երբեմն՝ գողնալով, յա-
փրշտակելով, չարչարելով և բարոյաւ-
ովէս ալ սպաննելով իր մէկ Պատրիար-
քը . և այսօր իր բաղրը դիւանագիտա-
կան աւսմունքն ու հնարքը կը զինէ
ջախջախելու համար զանննք՝ որ գի-
տութեամբ կամ անդիտութեամբ հայ-
րենի Եկեղեցւցն կը մօտենան, և յա-
փրշտակելու համար Հոյ Եկեղեցւցն

ձեռքէն հողու թիզմը, կտորած կան
թեղ մը, ոսկորի կտօր մի, տւլելու ի-
րաւունք մը, վարագուրի ծուէն մը Ար-
զօրութիւնն է որ կրնայ դիմադրել Սա-
քիավիլլի և Լոյօլայի դաշնակցութեն.
Հոյուն բարոյական զօրութիւնն այս
վիճակին մէջ բնչակիսի վահան պիտի
կարենայ գործածել այս յարձակման
դէմ, թող մտածեն որոնք միաք ունին-
իսկ որոնք որ չունին, թող բարբան-
չին, թող կանչութուտեն թէ՝ սա կա-
շառակուրծ է, նա մատափէ, թէ այս
Սոհմանադրութիւնը բռնագատեց,
թէ այն բռնազրուեց, միւսը գերեզ-
մաննոցը ծախեց, անդինը բեռնակիր-
ներով և ջրհանկիրներով բռնացաւ,
ասոնք Սահմանադրութեան տօնին չե-
կան, անոնք կեցցէ չը պօտացին, սա
Վասակ է, գա Մերուժան է, նա Յու-
գա է, և վերջապէս ամբատանեալ է:
Ասոնք և այսպիսի խօսքեր, որ ա ամկին
միամառութեան և տգիտութեան քմաց
շատ յարմար են. թէպէտ ստուերնե-
րու մէջ կան մարդիկ՝ որք ըու գիտեն
թէ յիմար և անհիմն ու անձոռնի ամ-
բաստանառութիւնը, զարարառութեանց
հաւասար անպիտան ու անտրդ էակ-
ներէ եկած նախատինք են ժողովքնե-
րու՝ որ Ազգ մը կը ներիմայացնեն, որ
գեռ պատուց հետք մը կը կրեն, թէ
եւ նշանաւոր յիսունուերկուներն ալ
իրենց մէջ պարունակեն, բայց դար-
ձեալ կրնան արդարադատ ժամանուկ-
ներ ունենալ և իրենց ազգին օդտա-
կար ծառայութիւն մ' ընել: Իրենք
ըու գիտեն թէ ինչ որ Մերուժան,
Վասակ, մատնիչ կ'անուանեն, այն
մարդիկն են որ իրենց Սահմանադրու-
թիւն տուին, նշնը գործադրել սովո-
րեցուցին, գրելու՝ ոյսինքն մկանըու
անսանձ աղատութիւն առ ին, և թե-
րեւս չափաղանց աղնուականութեամբ
կ' դատաստան չկանչչին և զանձին

արդարացնել նախատինք համարեցան,
երբ ազէկ գիտեն թէ բեռնակիր եւ
ջրհանկիր գործիք վնասաող չկար, ոյլ
օրինաւոր քուէիմք աթոռ ելլաներն
ունաց քսութեան եւ գրգութեան
և ժողովրդեան տգէտ անտարբերու-
թեան առջեւ՝ իրենց կամքն իջան ու
աղստ թաղուցին աթոռուը, և խնդրե-
ցին յԱստուծոյ ՚ի սէր ազգին որ աւ
ւելի արժանաւարադ զնը հսն բազմե-
ցընէ:

Բայց անոնք որ միամնաբար այս
խաւարույին էակներուն գործիքներն են,
որ փոքրիկ շահերու սպասուրկութիւնը
ազգին տունը կը կործանեն, միթէ ընէ
տանի թշնամի անունին արժանի չեն:
Ըստ մեղ՝ չկոյ աւելի վնասակոր մէկը
քան զայն մարդը՝ որ չկրնալ որոշել
մարդկութեան պահանջմունքները, ալ-
դէտ ըլլալով անոր կրօնական և քաղա-
քական պիտոյից, կ'ելէ առաջնորդ
կը կանգնի, օրինաւորութիւնը կը լու-
ծէ, անկանոնսթեամբ օրինաւոր կը
քարոզէ, կարծելալ թէ վատահամ-
բաւելը պաշտօն մ' է՝ զօր գրիչ մը
ըսնել կրցողն աներկիւղ պէտք է գոր-
ծածէ: Չգիտեր այդ խեղճ էակը թէ
մարդկային ընկերութեան մէջ ամենէն
կարեւորը մարդն է, մարդ՝ որ ուսմունէ
քով, դատախարակութեամբ, հանձա-
րով, դիրքով, ծննդեամբ եւ հարրա-
տութեամբ կը ուարբերի իր նմաննե-
րէն, և որ իր համանանները կառա-
վարելու համար ստեղծուած է: Այս
մտածութիւնը թէպէտ բոլոր ժողո-
վորդական կամ աամկավարական դը-
րութեանց հակառակ ալ երեւայ, բայց
ճշմարտութիւն մ' է: Տեսէք դպրոց-
ները, ուր ութմասուն կամ հարիւր ոլ-
զաց չորս հինգ տղաւ օրինակին, առաջ-
նորդութեան եւ ակնարկութեան կը
հեաղանդին, անոնց ազգեցութեամբ
կը խաղան, կը գիմանգրեն, կը խոտիմին,

անհնց օրինակաւ կը խոնարհին , կը ձնշուին , կը հպատակին : Ի՞նչ որ է տղան դպրոցի մէջ , նոյն է մարդն այս աշխարհիս մէջ որ դպրոցին ընդարձակին է : Ուստի մարդը՝ որ կառավարելու , շարժելու , հանդարտեցնելու համար սակացուած է , շատ քիչ է թուով , այնչափ շատ չէ , որ երեւելի պատմիչ մը Գաղղիոյ առաջին սահմունադիր ժաղովցն ամենէն մեծ սիամը մունքը կը հոմարի այն օրէնքը՝ որ անձնուրացութեամբ ժաղովցն անդամները վերընարելի ըլսողէ կը գաղրեցնէր առաջին անդամնւան համար , վասն զի ինչ չափ ալ հարսւոտ ըլսոց ազդ մը տաղանդաւոր գլուխներով , ոչ երբէք ութէ հարիւր՝ հաղար՝ հոգի առաջին աստիճանի հանձար կրնայ ցուցնել : Ուստի անոնք որ ինկած Հոյ աղդին , որուն դաստիարակութեան գրքեր , դպրոցներ , վարդապետանոցներ , վարժապետանոցներ , վարժապետանոցներ և յուսաջադիմութեան ամեն գործիքը կը պակիսին , ինչ որ աչքի կ'երեւայ , տաղանդ , հանձար , առաքինութիւն , ուսմունք , կը բամբասեն , կը զրապարտեն և արհումարհ կը ցուցնեն , այս անոնք մեծ դաստապարտութեան արժանի են :

Անոնք ապագային մէջ ոյնչոփ ովէաք է արհամարտին ինչ չափ իրենց սիրաը արհամարհ է , ինչ չափ իրենց տաղանդը պատիկ է , ինչ չափ իրենց ուգին փոքրիկ է . վասն զի իրենք գիտեն թէ աղդին մէջ 'ի բաց առեալ քանի մը պաշտօններ՝ ամենքն ալ ձրի են . ուստի ձրի աջսատիլ յօգուտ աղդին և ձրի նախատուիլ , իրենց անձնական պատիւը , համբաւը ամեն օր անպետան ձեռքերու մէջ խաղալիկ տեսնել , համբերել եւ յարատեւել , ոչ է արւելալ տմին անձնուէր առաքինութիւն . նա որ համբերութիւն քարազեց , անարդ և շղթաբորթ ծառացին որ իրեն

ձեռք վերցնել համարձակեցաւ , և թէ որ ձշմորիաը կը խօսիմ ինչու կը զարնեսա հարցուց : Եւ որովհեաւու այդ գիրքնական առաքինութիւնը շատ հոգուագիւտ է , անոնք՝ որ աղդային գործերը զլուելի կ'ընեն և ըրբի կարող անձանց , որպէս զի իրենց պէս անպատանիներու տեղ բանան , բնանի թշնամի անուննին արժանի են : Իսկ անոնք որ ըրածնին և ըսածնին չգիտնու լով՝ գինովաւթիւնը իրենց չքմեղս կը համարին , Գիտինէսի պէս ժողովորդեան շունն եններ և հաշել մեր սրարաքն է կ'ըսէն և կը հացէն , և ազէտ կը ժողովուրդ մը կը գտնեն որ իրենց յիմար դրօշակին կը հետեւի , ամեն զիմացը ելսողս կը խորտակէ , անոնց համար կարելին է եւ պէտք է ըսել . «Տէր , թող գոցա զի ոչ զիտեն զինչ գործեն ա : Մենք չենք կարծեր , մանաւունդ թէ մեր կարծիքն է աղդին օգտին համար դաստատանի ենթարկել սահմելու համար այդ ապերասան լիդունները , ջախճախնելու համար այդ թունալից կզանենք , որնց օգուտը շատ քիչէ՝ եղած վնասին հետ բաղդատմամբ : Վասն զի արդէն աղդին կառավարութեան միջոցները տկար , անկարգութիւն և տգիտութիւն դրացեալ , եւ օտարն ու օտարացեալ աղդին փարախը յամենուատ կը պաշարեն , և տաղուկութիւն այնչափ սասարի է ներսը , որ առ վիճակին եթէ երկարի փարախը թափաւը և ամսցի պիտի մնայ :

Ե Ե Ե Ե Ե

Ա.ՍՈՒԱԾ

(Նախական դիլուսիոնալ հաղություն) :

Աստուծոց գոյութիւնը հաստատուած է բոլը աղդայ միաբանու-